Գործ թիվ ԵԴ2/30872/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24.10.2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ.Մազմանյանս, ծանոթանալով «Փի-Լենդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Հարություն Օհանյանի ընդդեմ ընդդեմ պատասխանող ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահե Հակոբյանի՝ 22.08.2023թ. թիվ 4062-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումին,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Փի-Լենդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Հարություն Օհանյանը 25.09.2023թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահե Հակոբյանի՝ 22.08.2023թ. թիվ 4062-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Մազմանյանին՝ 25.09.2023թ.:

Հայցադիմումը հանձնվել է դատավոր Գ.Մազմանյանի աշխատակազմին՝ 26.09.2023թ.:

Դատարանի՝ 29.09.2023թ. որոշմամբ հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, վերադարձվել է:

«Փի-Լենդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Հարություն Օհանյանը, հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացնելուց հետո, 18.10.2023թ. հայցադիմումը ներկայացրել է կրկին:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ.Մազմանյանին՝ 18.10.2023թ.:

Հայցադիմումը հանձնվել է դատավոր Գ.Մազմանյանի աշխատակազմին՝ 19.10.2023թ.:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը, գտնում եմ, որ հայցվորի կողմից հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է գործը նախապատրաստել դատաքննության:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ **Գ. ՄԱԶՄԱՆՅԱՆ**